Հիմնավորում

Մասիս քաղաքային համայնքի ավագանու 24.12.2020թվականի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 171-Ն որոշմանը կից թիվ 2, 3 և 4 հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին որոշման ընդունման

1. **Մասիս քաղաքային համայնքի 2021 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը**

2021 թվականի համայնքի բյուջեի վարչական մասում փոփոխությունը պայմանավորված է համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների, նկուղների ջրագծերի ու կոյուղագծերի ընթացիկ նորոգման համար 2021 թվականի բյուջեում նախատեսված միջոցները ավելացնելու և առկա խնդիրներին լուծում տալու անհրաժեշտությամբ:

2. **Առկա խնդիրների նկարագրությունը**

Համայնքի բազմաբնակարան շենքերի բնակիչների կողմից կան բազմաթիվ դիմումներ շենքերի տանիքների, նկուղների ջրագծերի ու կոյուղագծերի անմխիթար վիճակի մասին՝ ընթացիկ նորոգումների խնդրանքով, 2021 թվականի բյուջեում նախատեսված միջոցները չեն բավարարում առկա խնդիրների լուծման պահանջը բավարարելու համար:

Առկա խնդիրների ուսումնասիրությունից պարզվել է, որ բազմաբնակարան շենքերի տանիքների, նկուղների ջրագծերի ու կոյուղագծերի ընթացիկ նորոգման համար անհրաժեշտ է բյուջեից հատկացնել լրացուցիչ միջոցներ 4 475 800 դրամի չափով, որից՝ տանիքների ընթացիկ նորոգման համար 2 975 800 դրամ, նկուղների ջրագծերի ու կոյուղագծերի ընթացիկ նորոգման համար՝ 1 500 000 դրամ:

Հաշվի առնելով, որ 2021 թվականի բյուջեում ''Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ'' գործառական դասակարգման ''Տրանսպորտային ծառայություններ'' հոդվածում առկա միջոցներից չեն ծախսվել նախատեսվածի չափով՝ առաջարկվում է նշված հոդվածից 2 475 800 դրամ և բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 2 000 000 դրամ տեղափոխել ''Բնակարանային շինարարություն'' գործառական դասակարգման ''Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում'' հոդված :

ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեում ծախսերի ավելացումների և նվազեցումների մասին

Բյուջեի վարչական մաս

h/h	բաժին	խումբ	դաս	Գործառական դասակարգում, նպատակ	հոդված	Ծախսեր / հազար դրամ/
1	11	1	2	Պահուստային ֆոնդ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդը նվազեցնել	4891	-2000,00
2	01	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ. Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ հոդվածում տրանսպորտային ծառայությունների համար նախատեսված միջոցները նվազենել	4239	-2475,80
3	06	1	1	Բնակարանային շինարարություն. Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում հոդվածը ավելացնել	4251	4475,80
				Ընդամենը		0,0

2021 թվականի բյուջեի վարչական մասի ծախսերի փոփոխությունների արդյունքում բյուջեի ծախսերը չեն նվազի կամ ավելանա:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ն. ՍԱՀԱԿՅԱՆ